16947

361
P-64

1910

0.0.

2010

Н АРМ. Ч-110а

Դուբլ.

361
Ռ-64

ՀԱԾԻՒ

ԹԻՖԼԻՍԻ

Վարչութիւնը խոնարհաբար խնդրում է Ընկերութեան Մեծարգոյ անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովի՝ որ տեղի է ունենալու կիրակէ՝ ապրիլի 4-ին, առաւօտեան ժամը 11-ին։ Նոյն օրը կը ցուցադրուին և կը ծախուին Ընկերութեան արհեստանոցների ձեռագործներ, գործուածքներն ու գլխարկները ժամը 10-ից։ Гановская № 19.

ՔՍԱՆԵԻՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

608/45/IX
44830-ակ.
29553-63

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ 7
1910

Н А РМ.
4-110а

Դուբլ.

361
Ռ-64

ՀԱԾԻԻ

ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1909 Թ.

2310

ՔՍԱՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

60ռ/ԿՏ/ԼԽ
44830-ակ.
29553-63

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ 7
1910

2002

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի, որ կայացաւ 1909 թ. Մարտի 15-ին։

Ժողովը բացուեց 60 անդամների ներկայութեամբ։

Նախագահ ընտրուեց տ. Կատարինէ Լիսիցեանը։

Քարտուղար տ. Նունէ Տէր-Աւետիքեան։

Ժողովի սկզբում կարդացուեց 1908 թ. ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը և միաձայն ընդունուեց։ Տ. Ե. Յարութիւնեանը կարդաց Վարչութեան գործունէութեան մասին։ Իսկ տ. Ա. Կուզանեանը կար ու ձևի արհեստանոցի հաշիւը։ Նախագահը յայտնեց ժողովականներին, որ մինչև օրս ուսումնարանում միայն կար ու ձև էին անցնում, իսկ այս տարուանից արցնում են առարկաներ այնէ ռուսաց լեզու, հայոց լեզու, թուաբանութիւն, երգեցողութիւն, նկարչութիւն և այն... և որ առարկաները անցնում են I, II, III բաժանմունքներում, օրական պարապելով 2 ժամ. իսկ IV և V բաժ. սեպտեմբերին անցնելու են ապրանքագիտութիւն։ Իշխանուհի Թումանեանը հարց բարձրացրեց թէ արդեօք այդքան ժամեր առարկաներին յատկացնելը չի վնասիլ կար ու ձևին և թէ ինչէ պատճառը, որ այս տարուանից այդքան առարկաներ են մտցրել։ Տ. Յարութիւնեանը պատասխանեց, որ որքան աշակերտուհիները զարգացած լինեն, այնքան աւելի լաւ կըմբռնեն արհեստը։ Իսկ առժամանակ, որովհետև մեր ծխական դպրոցներում ուսումը չի կանոնաւորուած, ուստի շատ անպատրաստ աշակերտուհիներ են գալիս կար ու ձևի արհեստանոցը. անհրաժեշտ է նրանց գիտութեան խղճուկ պաշարը լրացնել, շարունակելով մի քանի առարկաներ այստեղ ևս։ Բացի այդ եթէ նոյնիսկ փոքր 'ի շատ է պատրաստուած աշակերտուհիներ գան, յամենայն դէպս նրանք ծխական

2002

դպրոցի ծրագիր պիտի անցած լինեն միայն, այնինչ կարիք է զգացուում, որ արհեստանոցի աղջիկները գիտութեան աւելի մեծ պաշար ունենան, որպէս զի աւելի զարգացած լինելով՝ աւելի լաւ իւրացնեն աւանդած արհեստը։

Ժողովականներից մի քանիսը նկատեցին, թէ ինչու մանկական բաժինը վերացուած է. իսկ դորան ուսումնարանի Աւագ վարժուհին պատասխանեց, որ ով որ կարողէ հասակաւորների համար կարել, նա կարողէ և մանկական զգեստներ կարել, ուստի այս արհեստանոցում անցնում են մանկական զգեստների ձևը, իսկ վարժուել կարի մէջ աւելորդ է համարուում, մանաւանդ որ ժամանակ յատկացնել այդ գործին հնարաւորութիւն չ'կայ։ Բայց ժողովականներից առարկեցին, որ անհրաժեշտ է ոչ միայն ձևը, այլ և վարժութիւնը այդ մասում. նոյն իսկ առաջարկողներ եղան, որ աւարտած աշակերտուհիները մնան մի տարի ևս վարժուելու թէ մանկական և թէ առհասարակ հասակաւորների համար զգեստներ կարելու մէջ։ Ընդհանուր ժողովը բարւոք համարեց մի մասնաժողով ընտրել, որը Վարչութեան հետ միասին այս հարցը քննեն և հետևեալ ընդհանուր ժողովին զեկուցանեն։ Անդամներ ընտրուեցին հետևեալ անձինք՝ Տ. Մելիք-Բախտամեան, տ. Կուզանեան, օր. Բաստամեան, տ. Շխեան և Իշխան. Թումանեան։ Այնուհետև կարդացուեցին ընկերութեան 1908 թ. ել և մտից հաշիւը, վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը և նախահաշիւը, որոնց ընդհանուր ժողովը հաստատեց առանց փոփոխութեան։ Որոշուեց հետևեալ ժողովներում տպագրուած հաշուից կարդալ անհրաժեշտ տեղեկութիւնները։ Տ. Միրիմանեանը կարդաց սեպհական շէնք ձեռք բերելու համար ընտրուած մասնաժողովի զեկուցումը, որից երևաց որ մինչև այժմ նայած տներից ոչ մէկը չի համապատասխանել ընկերութեան պահանջներին. ընդհանուր ժողովը վեր ընտրելով մասնաժողովի միևնոյն անդամներին՝ լիազօրութիւն տուեց նրանց Վարչութեան հետ միասին ձեռք բերել ընկերութեան համար սեպհական շէնք միայն այն պայմանաւ, որ վերջինի վրայ գործադրեն ոչ աւելի, քան ընկերութեան դրամագլուխն է այսինքն 25 հազար ռուբ. այդ նպատակին կարող են յատկացնել և այն նուիրատուութիւնները, որոնց նուիրողն ինքը նպատակը չի որոշել։

Վարչութիւնն առաջարկեց երկու նոր արհեստներ սկսել, այնէ կօշկակարութիւն և գլխարկներ պատրաստել։ Տ. Մ. Ծուրինեանը զե-

կուցեց վերջին արհեստի մասին միքանի տեղեկութիւններ. այս հարցերի քննութիւնը և ընտրութիւնները յետաձգուեցին հետևեալ ընդհանուր ժողովին։

Ժողովը փակուեց ժամը 2½-ին.

Նախագահ՝ Կ. Լիսիցեան

Քարտուղար Ն. Տէր-Աւետիքեանց

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովի, որ կայացաւ 1909 թ. ապրիլի 15-ին։

Ժողովը բացուեց 36 անդամների ներկայութեամբ։ Նախագահում էր տ. Կ. Լիսիցեանը։ Նախագահը առաջարկեց ամենից առաջ ընտրութիւններ կատարել, որովհետև հերթով դուրս էին գալիս Վարչութեան անդամներ՝ տ. Խատիսեանց, տ. Ղամբարեան, տ. Ծուրինեան. սրանց կանդիդատներ՝ տ. Վահրամեան, տ. Օհաննիսեան, օր. Ռոտինեան և տ. Քալանթարեան։

Վարչութեան անդամներ միաձայն ընտրուեցան նոյնք՝ տ. Խատիսեան, տ. Ղամբարեան և տ. Ծուրինեան։

Փոխ-անդամներ

Տ. Շխեան, Ս. Քալանթարեան, տ. Մելիք-Բախտամեան, տ. Վահրամեան, և օր. Ռոտինեան։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ։

տ. Բարխուդարեան, տ. Աւետեան և տ. Աւթանդիլեան։

Փոխ-անդամներ

Տ. Կուսիկեան

Տ. Խատիսեանը կարդաց մի զեկուցագիր, որը վերաբերում էր կօշկակարութեան օգտաւէտ արհեստին։ Այս առաջարկութիւնը անցաւ միաձայն, որին ծախք կհարկաւորուի մօտաւոր. 300—400 ր. տ. Ծուրինեանը առաջարկեց բանալ գլխարկ շինելու արհեստանոց, ուր սկզբում պէտք է ընդունուի 20 հոգի, որոնք աւարտած պէտք է լինեն ծխական դպրոցը. այս գործին ծախք կհարկաւորուի մօտաւորապէս 500 ր։ Այս առաջարկութիւնը նոյնպէս անցաւ։

Յետոյ իշխանուհի Արղութեանը կարդաց իւր զեկուցագիրը բօննաների կուրսերի մասին, որտեղ մանրամասն կերպով նկարագրում էր այդ կուրսերի անհրաժեշտ և օգտաւէտ լինելը. նա ասում էր, որ Ընկերութիւնը 360 ր. ծախսելով կարող է մի խումբ աղջկերք պատրաստել, որը շատ կարևոր է մեր հայ ընտանիքների համար։ Մի քանիսը նրան առարկեցին. տ. Կ. Լիսիցեանը ասաց, որ մեր արհեստանոցի աղջկերքը այնքան լաւ հայերէն չգիտեն, որ կարողանան բօննաներ լինել. քանի որ այդ պաշտօնի համար անհրաժեշտ է մայրենի լեզուի գիտութիւնը. ոմանք էլ առարկեցին, ասելով որ արհեստանոցի աշակերտուհիները այնքան պատրաստութիւն չունին։ Ոմանք էլ գտնում էին, որ ֆրէօբելեան գործնական պարապմունքների համար արհեստանոցում յարմարութիւն չկայ։ Տ. Ե. Յարութիւնեանը այս առարկութիւններին պատասխանեց հետևեալը. կար ու ձևի արհեստանոցի աղջիկները, որովհետև գալիս են ծխական դպրոցներից որոշ պաշարով և արհեստանոցումն էլ շարունակում են մի քանի առարկաներ, ի թիւս որոց և հայոց լեզուն, ուրեմն նրանք բաւական լաւ պէտք է գիտենան այդ լեզուն և ընհանրապէս աւելի զարգացած պէտք է լինեն, քան մինչև այժմ էին. ինչ վերաբերում է գործնական պարապմունքներին, այդ էլ կարելի է յարմարացնել, քանի որ առարկաների համար առանձին դասարան կայ. երբեմն այնտեղ կարելի է հաւաքել երեխաներ և փորձնական դասեր ունենալ, որպէս զի աշակերտուհիները գործնականապէս վարժուեն. այս բոլորի համար անհրաժեշտ է ի հարկ է մի տարի աւելի պահել մեր աշակերտուհիներին արհեստանոցում և այդ դէպքում գուցէ նրանք ոչ թէ բօննաների, այլ գաւառական դպրոցներում ձեռագործի և այլ առարկաների վարժուհու պաշտօններ կարողանան ստանձնել։ Թէև նոյն իսկ ձեռագործի վարժուհի լինելու համար արհրաժեշտ է որոշ մանկավարժական հմտութիւն։

Այսպէս երկար թեր և դէմ խօսելուց յետոյ ընտրուեց մի մասնաժողով այդ հարցը մանրամասն քննադատելու համար. ընտրուեցին մասնաժողովի համար հետևեալ անձինք. իշխանուհի Արղութեան, տ. Յարութիւնեան, տ. Կուզանեան, տ. Վարդանեան, օր. Կ. Ղուլիջանեան և Կ. Լիսիցեան։

Նախագահ՝ Կ. Լիսիցեան

Քարտուղար՝ Ն. Տէր-Աւետիքեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 1909 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

1909 թուին Հայուհեաց Բարեգ. Ընկ. Վարչութիւնը բացի արդէն գոյութիւն ունեցող կար ու ձևի ու գուլբայագործութեան արհեստանոցներից, բաց արեց և գլխարկներ շինելու արհեստանոց։

Կար ու ձևի արհեստանոցում բացի այն, որ կար ու ձևն անցնում են իբրև մասնագիտութիւն, անցնում են և մի քանի օժանդակիչ առարկաներ, սակայն այդ առարկաների դասաւանդութիւնը, ինչպէս անցեալ տարի ընդհանուր ժողովին ասուեց, նիւթական դժուարութիւնների հետ էր կապուած։ (Ինչով և մասամբ պէտք է բացատրել ընկերութեան այս տարուայ դէֆիցիտը, թէև գլխաւոր դրա պատճառը կայանում է նրա մէջ, որ Վարչութիւնը՝ չնայած իւր ջանքերին, հնարաւորութիւն չունեցաւ 1909 թ. նախահաշիւը ի կատար ածել)։

Կար ու ձևի արհեստանոցում 1908/9 ուս. տարում սովորում էին 125 աշակերտուհի, նոյն թուին արհեստանոցի դասընթացն աւարտեցին հետևեալ 18 հոգին վարպետուհու կոչումով։

1. Աւետիսեան Սիրանոյշ
2. Բագուրեան Աշխէն
3. Բուդաղեան Շուշանիկ
4. Գալարեան Մարիամ
5. Գրիգորեան Նատալիա
6. Գրիգորեան Նատալիա
7. Խանգամեան Եւա
8. Խաչատրեան Քալիա
9. Մարտիրոսեան Արուսեակ
10. Միհրանեան Աննա
11. Յովհաննիսեան Արուսեակ

12. Յովհաննիսեան Հայկանոյշ
13. Նիկողոսեան Մարիամ
14. Նասիրեան Սրբուհի
15. Պիրզուլեան Մարիամ
16. Տէր-Յովհաննիսեան Մանուշակ
17. Տէր-Յովհաննիսեան Մարիամ
18. Ուսումեան Մարիամ

Կարուձևի արհեստանոցում նոյն թուին կային ութ թոշակառու աշակերտուհիներ. Ռստիկեան Ա.—Կ. Եւանգուլեանի անուան, Կիւրեղեան Լ. և Նազարեան Վ.—Կ. Մութաֆեանի, Սիրունեան Ա.—Նունէ Թամամշեանի, Մելիքեան Ն. և Գրիգորեան Մ.—Մ. Մակարեանի անուան, Թարխանեան Մ.—Ն. Փրիդոնեանի անուան և Ասլանեան Գ.—Ս. Փոնդոյեանի անուան։

Վարչութիւնն անցեալ տարուայ ընդհանուր ժողովում յայտնեց, որ 1908 թ. սեպտ. ամսից ընդարձակել է իւր գործունէութիւնը, բաց անելով գուլբայագործական արհեստանոց։ Այդ արհեստանոցը հետզհետէ աւելի առաջ է գնում. ինչ վերաբերում է պատուէրներին, միշտ այնքան է լինում, որ նոյնիսկ հնարաւորութիւն չի լինում ժամանակին կատարելու, իսկ աշակերտուհիների թիւը առժամանակ համեմատաբար քիչ է. դրա պատճառը կայանում է նրանում, որ ամեն մի մեքենայի վրայ կարող են աշխատել միայն 2 հոգի և որովհետև արհեստանոցն ունի ընդամենը 4 մեքենայ, ուստի աշակերտուհիների թիւն էլ շատ սահմանափակ է. այդ արհեստանոցում այժմս աշխատում են միայն 10 հոգի, որոնցից 1-ը վարպետուհին է, իսկ միւսները աշակերտուհիներ կամ գուլբայագործութեան դասընթացն աւարտածներ, որ շարունակում են օրավարձով աշխատել։

Ամբողջ դասընթացն անցնելու համար փոքր աշակերտուհիները (13—14 տարեկան), մնում են մի տարի, իսկ հասակաւորները կարող են սովորել և 6 ամսում, անցնելով ոչ միայն գուլբայագործութիւնը, այլ ամեն տեսակի բարդ գործուածքներ, մանկական զգեստներ, մեծերի և երեխաների վերնազգեստներ, գլխարկներ և այլն։

Մինչև այժմ աւարտածներից՝ մէկը մեքենայ առնելով՝ Տփխիսում բացեց իւր արհեստանոցը, միւսը Ախալցխայում բացեց արհեստանոց, մէկը պատրաստւում է Վան գնալ, մի քանիսը մեզ մօտ աշ-

խատում են օրավարձով, բացի այդ՝ գաւառներից դիմումներ կան վարպետուհիներ ուղարկելու համար։

Ինչպէս արդէն յիշուեց, գուլբայագործական արհեստանոցում ոչ միայն գոուլբաներ են գործւում այլ և զգեստներ, վերնազգեստներ և այլն, այս գործուածքները, ինչպէս նկատուած է պատուիրատուների կողմից, եթէ ոչ աւելի արժան, գոնէ աւելի թանգ էլ չեն ծախւում քան շուկայինը, սակայն անհամեմատ աւելի դիմացկուն են քան շուկայինը։

Մի խօսքով այս գործը ապագայում մեծ յաջողութիւն է խոստանում, եթէ միայն կարելի լինի ընդարձակել արհեստանոցը և մեքենաների թիւը շատացնել. այդ դէպքում վարչութիւնը հնարաւորութիւն կունենայ թէ պատուէրներ շատ ընդունել և թէ աշակերտուհիների ու օրավարձով աշխատողների թիւը շատացնել։

Անցեալ տարուայ ընդհանուր ժողովի որոշմամբ 1909 թ. սեպտ. 4-ին Վարչութիւնս ձեռնարկեց և գլխարկներ շինելու արհեստանոցի բացմանը։ Այս արհեստանոցում արդէն սովորում են 20 հոգի օրիորդներ և կանայք ամենախեղճ դասակարգից 15—30 տարեկան հասակի։

Վարպետուհի հրաւիրուած է մի օրիորդ, որ մինչ այդ աշխատում էր Տփխիսի ամենայայտնի արհեստանոցներից մէկում. նա ստանում է տարեկան 420 ռ.

Աշակերտուհիները սովորում են ձրի և դասընթացը շարունակուելու է 2 տարի։

Մի քանի ամսուայ փորձը ցոյց է տալիս, որ այս գործը ևս ունենալու է յաջողութիւն, տալով խեղճ դասակարգի ձեռքը մի նոր արհեստ։

Որոշուած էր սկսել և կօշկակարութեան արհեստը, բայց Վարչութիւնս ի նկատի ունենալով ընկերութեան նիւթական սուղ միջոցները, որոշեց առժամանակ յետաձգել։

Հաշուետուութեան տարում ընկերութիւնն ունեցել է երկու մշտական անդամներ 150 ռ. վճարող. տիկնայք Մարգարիտ Աբեան և Եղիսաբէթ Ղորդանեան և 146 իսկական անդամներ 6-ական ռուբ. վճարող։

1909 թ. յօգուտ ընկերութեան ստացուել են հետևեալ գումարները. Քաղաքային Վարկի ընկ. 150 ռուբ., Պ. Գէորգ Աստուածատրեանից 10 ռ., Թաւրիզի Հայուհեաց Ընկ. նուիրած զորգից

228 ռ., Միրզոյեանների Նաւթարդիւնաբեր. ընկ. 100 ռ. և Պ. Գէորգ Զիլինգարեանից ի յիշատակ վաղամեռիկ Մարգարիտ Մարտիրոսեանի 100 ռ.

Վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը բժ. Ն. Խատիսեանին, և բժ. Գ. Թամամշեանին, որ ձրիապէս բժշկում են արհեստանոցի աշակերտուհիներին նոյնպէս պ. Խ. Դիլանեանին, որ շաբաթական 1 դաս ընթերցանութեամբ է պարապում արհեստանոցի IV բաժ. աշակերտուհիների հետ առանց վարձատրութեան։

1909 թուի յունիս ամսին Վարչութեանս նախաձեռնութեամբ Թիֆլիզի բոլոր բարեգործական և կուլտուրական Ընկերութիւնները միացան և Ադանացոց օգտին մի զրօսանք կազմակերպեցին, որից ստացուեց մօտ 3000 ռուբլի զուտ արդիւնք և այդ գումարը Վեհափառ Հայրապետի միջոցաւ ուղարկուեց Տաճկահայաստան աղէտի վայրը։

Հաշուետուութեան տարում Վարչութիւնս մասնակցել է նորին Վեհափառութեան Ընդունելութեան համար ընտրուած մասնաժողովին, ընտրելով իւր կողմից ներկայացուցիչ տ. Ե. Յարութիւնեանցին։

ԶԵԿՈՒՅՑԻՄՆ ԿԱՐ ՈՒ ՉԵԻԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ 1908—09 ՈՒՍ. ՏԱՐՈՒԱՅ.

1908 թ. սեպտեմբերին արհեստանոցում սովորում էին 125 աշակերտուհի, որոնք հետևեալ կերպով էին դասաւորուած.—

I	բաժանմունքում—	31
II	»	31
III	»	22
IV	»	22
V	»	19

Տարուայ զանազան ժամանակներում արհեստանոցից հեռացան 11 հոգի, որոնցից հինգը—հիւանդութեան պատճառով, իսկ վեցը՝ ընտանեկան հանգամանքներից ստիպուած։

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է բաժանել հետևեալ դասակարգերի.

Արհեստաւոր	60
Մանրավաճառ	27
Վաճառական	11
Գործակատար	9
Բանուոր	13
Ծառայող	3
Հոգևորական	2

Արհեստանոցի որբերի թիւն է 4, իսկ կիսաորբերի, որոնք զուրկ են հօրից՝ 35.

Արհեստանոցի աշակերտուհիները, բացի I նախապատրաստական բաժանմունքից՝ որտեղ պատուէրներ չեն ընդունում, կարել են հետևեալ պատուէրները և վաստակել են.

II բաժ. կարել է 147 կտոր կանանց և անկողնի սպիտակեղէն և վաստակել է		156 ռ. 55 կ.
II «	կարել է 250 նշանագիր հարթակարով,	

	35 բլուզ (որոնցից 12-ը զարդարուած հարթակարով) 3 կտոր վերանորոգել և վաստակել է	233 ռ. 20 կ.
IV «	կարել է 7 ամբողջ զգեստ, 30 բլուզ, 16 կտոր վերանորոգել և վաստակել է	135 ռ. 25
V «	կարել է 33 ամբողջ զգեստ, 33 բլուզ 31 կտոր վերանորոգել և վաստակել է	412 ռ. 75
	Ընդամենը	937 ռ. 75 կ.

Բացի պատուէրներից, բոլոր բաժանմունքների աշակերտուհիները պատրաստել են նաև կանանց և երեխայոց սպիտակեղէն, բլուզներ, օձիքներ և գոգնոցներ տարեկան սովորական վաճառքի համար, որ տեղի է ունենում ընդհանուր ժողովի օրը։ Այդ վաճառքից մնացել է զուտ արդիւնք 73 ռուբլի, որն աւելացնելով վերոյիշեալ գումարին՝ կազմում է ընդամենը— 1010 ռ. 75 կ.

Այս գումարից ընթացաւարտ աշակերտուհիները ստացել են %—102 ռ. 15 կ. որը կազմում է իրանց աշխատածի 25%-ը։

Արհեստանոցի. ուսուցչական խումբը, որ բաղկացած է 10 վարժուհուց և մի աւագ վարժուհուց, ունեցել է մանկավարժական ժողովի 9 նիստ, երբեմն վարչութեան անդամների ներկայութեամբ, որտեղ արծարծուել են և վճռուել մանկավարժական և մասնագիտական խնդիրներ արհեստանոցին վերաբերեալ։

Տարուայ ընթացքում իւրաքանչիւր աշակերտուհի բացակայել է միջին թուով 12 օր։

Տարուայ վերջն աշակերտուհիները հետևեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին։

Փոխադրուեցին հետևեալ բաժանմունք	85 հոգի
Մնացին նոյն բաժանմունքում	11 »
Աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական	18 »

Ընթացաւարտ աշակերտուհիներից մէկը գնաց գաւառ աշխատելու նպատակով. երկուսը մտան տիկին Ժանի յայտնի արհեստանոցը կար ու ձևի արհեստի մէջ կատարելագործուելու, մէկը պատրաստւում է հանրակրթական առարկաներից՝ ապագայում վարժուհու պաշտօն ունենալու նպատակով. իսկ մնացածները օրավարձով

են աշխատում զանազան ընտանիքներում կամ իրանց տանն ընդունում պատուէրներ։

Ձքաւոր աշակերտուհիների թիւն էր 27։ Սրանք ստացել են զգեստ, կօշիկ, կրկնակօշիկ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյքներ, դեղօրայք և երբեմն դրամական օգնութիւն։ Սրանց թուումն են և բարերարների անուան 8 թոշակառու աշակերտուհիք։ Թոշակառու աշակերտուհիներից մէկը ընկերութեան միջոցներով ամարային արձակուրդին ուղարկուել է Դիլիջան ամարանոցը՝ խանգարուած առողջութիւնը վերականգնելու։

Պարապմունքն սկսուել է սեպտ. 1-ին և վերջացել յունիսի 5 ին։

1909 թուի յունուարի 1-ին մնում էր.	1909 թ. նախահաշիւը	Իսկական մուտք	
Պետական խնայողական գանձարանում		630 97	
Ընկերութեան գանձարանում		1309 39	
Տոկոսաբեր արժէթղթեր		23444 82	
Շարժական կայք		1597 26	
Ձեռագործի նիւթեր		648 98	27601 42
ՍՏԱՑՈՒԱԾ Է.			
1. 144 անդամից	1200	864	
2. Տ. Մարգարիտ Աբեանից և Եղիսաբէթ Ղորղանեանից միանուագ անդամավճար	600	300	
3. Տոկոս ընկերութեան արժէթղթերից	768	744 80	
» Յատուկ դրամագլխից	152	152	
4. Կարուձևի արհեստանոցի պատուէրներից	1000	889 40	
5. Ձեռագործի վաճառքից	152 68	100 28	
6. Զրօսանքից և ներկայացումից	3400	2260 18	5310 66
7. Նուիրատուութիւններ	600		
Գէորգ Աստուածատուրեանից Պետերբուրգից		10	
Քաղաքային կրեդիտային ընկերութիւնից		150	
Թաւրիզի ընկերութեան նուիրած զորգից		228	
Փոխանցումն	7872 68	388	32912 08

	1909 թ. նախահաշիւը	Իսկական ելք	
1. Ռոճիկ վարժուհիներին	4699 88	4679 88	
» Ծառայողներին	372	372	
2. Բնակարանի վարձ	1700	1310	
3. Նախապատրաստական ձեռագ. համար նիւթեր	60	111 91	
4. Տարազի ամսաթերթեր	30	23 75	
5. Զքաւոր աշակերտուհ. զգեստ	203 80	54 63	
6. » » նպաստ		110 17	
7. Վառելիք	200	141 80	
8. Մանր ծախս	50	78 16	
9. Դեղօրայք	30	18 48	
10. Դիւանական և տպագրական ծախքեր	100	142 27	
11. Տոմսակներ պահելու և ապահովագրութեան	40	31 55	
12. Կահ-կարասիքի վերանորոգումն	25	18 75	
13. Բանուորուհիների օգտին հանած տոկոս	100	102 50	
14. Կ. Եւանգուլեանի Ն. Փրիդոնեանի, Գ. Մութաֆեանի, Մ. Մակարեանի, Ն. Թամամշեանի և Ս. Փոնդոյեանի Փրիդոնեանի անուան թոշակառուներին	152	152	
15. Էկսպերտներին քննութեան համար	10	11	
16. Անակնկալ ծախսեր	50	37 20	7396 05
Նախորդ տարուանից չհաշուած նիւթեր և վիճակախաղին նուիրած	7872 68		88 97
Փոխանցումն	7872 68		7485 02

	1909 թ. նախահաշիւը	Իսկական մուտք	
Փոխանցումն . .	7872 68	388	32912 08
Եղբ. Միրզոյեանների նաւթարդիւնաբեր. ընկերութիւնից . . .		100	
Պ. Գէորգ Զիլինգարեանից ի յիշատակ հանգուցեալ Մարգարիտ Մարտիրոսեանի		100	588
ԳՈՒՄԱՐ . .	7872 68		33500 08

	1909 թ. նախահաշիւը	Իսկական եկամուտ	
Փոխանցումն . . .	7872 68	150	7485 02
1910 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՆ ՄՆՈՒՄ Է			
1. Պետական խնայող. գանձարանում		150	
2. Ընկերութեան գանձարանում		841 43	
3. Տոկոսաբեր արժէթղթեր կար . . . 23444—82 Ծախսուած է 1000ր. ըենտա, որից ստացուած է . . . . 866—86		22577 96	
4. Շարժական կայք		1607 31	
5. Ձեռագործի նիւթեր		460 11	25636 81
Գուլպանոցի համար ծախսուած է պահեստի գումարից			297 48
Գլխարկների արհեստանոցի համար ծախսուած է պահ. գումարից .			80 77
ԳՈՒՄԱՐ . .	7872 68		33500 08

29553-63

ՄՈՒՏՔ — ԳՈՒԼՊԱՆՈՅԻ ԵԼ

1909 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՆ ՄՆՈՒՄ ԷՐ				
Շարժական կայք			181	
Թելեր			20	
Պատուէրներից ստացուած է	302	05		
Երկու բանուորուհուց ուսման վարձ	50		352	05
679 ր. 82 կ.-ից, որ մնում էր արհեստանոցի համար յատկացրած 1000 ռուբլուց ծախսուած է			297	48
			850	53

ԵԼՔ — ԵՄՏԻՑ ՀԱՇԻՒԸ

Ռոճիկ վարժուհուն	220			
Մուտքից բանուորուհիների օգտին հանած տոկոս	139	65		
Յայտարարութիւններ և մանր ծախսեր . . .	48	88	408	53
Շարժական կայք կար . . . . . 181 ր.				
աւելացաւ . . . . 147 ր.	328			
Թելեր (մնացորդ)	114		442	
			850	53

ԳԼԽԱՐԿՆԵՐԻ ԱՐՀԵՍՏ

Պատուէրներից ստացուած է	94	10
Ընդհանուր ժողովի վճռի համաձայն յատկացրած 500 ռուբլուց, ծախսուած է	80	77
	174	87

ԱՆՈՑԻ ՀԱՇԻՒԸ

4 ամսուայ ռոճիկ վարժուհուն	140	
Ջեռագործի նիւթեր	26	52
Գլխարկների տարազի ամոթթերթ	8	35
	174	87

Ընկերութեան գանձարանում	841	43
Պետական խնայողական գանձարանում	150	
Տոկոսաբեր արժէթղթեր	22577	96
Շարժական կայք	1607	31
Ձեռագործի նիւթեր	460	11
ԲԱԼԱՆՍ . . .	25636	81

Անձեռնմխելի դրամագլուխ			11709	40
Յատուկ դրամագլուխ			4000	
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ				
Առ 1-ն յունուարի 1909 թ. եղել է	8179	82		
Գուլպանոցի և գլխարկ. արհ. համար ծախսուած է	378	25	7801	57
ԾԱԽՍԻ ԳՈՒՄԱՐ				
Առ 1-ն յունուարի 1909 թ. եղել է	3712	20		
1909 թուի դեֆիցիտը	1586	36	2125	84
ԲԱԼԱՆՍ . . .			25636	81

Ելևմտից հաշուի համաձայն ընկերութեան

1909 թուի եկամուտը արտայայտուեց

հետևեալ գումարով . . . . . 5898 р. 66 к.

Ընկերութիւնը 1909 թուին ծախք է ունեցել 7485 р. 02 к.

Ծախքից դուրս գալով մուտքը, ստացւում է

դեֆիցիտ . . . . . 1586 р. 36 к.

Վերաստուգիչ յանձնաժողովը, քննելով Ընկերութեան հաշիւները, գտաւ ճիշտ։

Անդամներ. | Ե. Ալթանդիլեան
Ն. Աւետեան
Ս. Բարխուդարեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1910

1. Միանուագ վճարող անդամներից . .	600	
2. Իսկական անդամներից	1272	
3. Զքօսանքից, ներկայացումից և այլն . .	2630	
4. Նուիրատուութիւններից	600	
5. Ընկերութեան գումարների տոկոս . .	820	80
6. Պատուէրներից	1025	20
7. Ձեռագործների վաճառքից	100	
ԳՈՒՄԱՐ . . .	7048	

ԹՈՒՒ ՆԱԽԱՀԱՇՒՒՐ

1. Վարժուհիներին և ծառայողներին ռոճիկ	4740	
2. Բնակարանի վարձ	1360	
3. Մանր ծախք	50	
4. Վառելիք	150	
5. Դեղօրայք	20	
6. Տարազի ամսաթերթեր	20	
7. Նախապատրաստական ձերագործ. համար նիւթեր	65	
8. Կահ-կարասիքի վերանորոգումն . . .	20	
9. Թոշակառուներին	152	
10. Դիւանական և տպագրական ծախքեր .	100	
11. Տոմսակներ պահելու և ապահովագրութեան	40	
12. Բանուորուհիների օգտին հանած գումար	100	
13 Զքաւոր բանուորուհիներին զգեստ և նպաստ	200	
14. Անակնկալ ծախսեր	20	
15. Էքսպերտներին քննութեան համար . .	11	
ԳՈՒՄԱՐ . . .	7048	

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Ընկերութեան պատուաւոր անդամներ՝

պ. Ա. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան
տ. Հ. Մարտիրոսեան
տ. Ն. Ղամբարեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի՝ տ. Մ. Խատիսեան
Փոխ-ատենապետուհի՝ տ. Հ. Մարտիրոսեան

Անդամներ	Փոխ-անդամներ
տ. Մ. Ցուրինեան	տ. Ե. Վահրամեան
տ. Ն. Ղամբարեան	տ. Մ. Շխեան
տ. Վ. Միլեան	տ. Մելիք-Բախտամեան
տ. Ե. Յարութիւնեան	տ. Ս. Քալանթարեան
տ. Մ. Ղարաջեան	օր. Ե. Ռոտինեան
տ. Շ. Օգանեսեան	
տ. Մ. Լիսիցեան	

Վերաստուգիչ մասնաժողովի անդամներ	Փոխ-անդամներ
տ. Հ. Աւթանդիլեան	տ. Մ. Կուսիկեան
տ. Ս. Բարխուդարեան	
տ. Ն. Աւետեան	

ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Աբիեան Մարգարիտ (Ն. անդ.)
Կոյս Աբամելիքեան
տ. Աւթանդիլեան Հեղինէ
տ. Ալիբէգեան Նունէ
տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբէկեան Մարիամ
† իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Սոլ.
իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Յովհ.
տ. Ադիլխանեան հեղինէ
10 օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաղդասարեան Անահիտ
տ. Բաբայեան Վարվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վարվառէ
† իշ. Բէկթաշէկեան Մարիամ
տ. Գէորգեան Նունէ
† Դոլուխանեան Եղիսաբէթ
տ. Եւանգուլեան Վարվառէ
20 տ. Եարալեան Կատարինէ
տ. † Էմինեան Անանա
Կոյս Էնֆիաճեան Իսկուհի
տ. Թամիրեան Սոֆիա
տ. Թայիրեան Եղիսաբէթ
Կոյս Թայիրեան Հռիփսիմէ
տ. Թիւնիբէկեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ծատուրեան Վարդուհի
30 տ. Ղորղանեան Եղիսաբէթ (Նոր անդամ)
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ճգնաւորեան Մարիամ
† տ. Մանթաշեան Դարիա
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանոյշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
† տ. Մեհրաբեան Կատարինէ
40 տ. Միլեան Վարվառէ
տ. Մութաֆեան Շողակաթ
† տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
† տ. Շադինեան Քալի
տ. Շումախեր Եկատերինա
† տ. Զիթախեան Սոֆիա
տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Անանա
տ. Ռոտինեան Վարվառէ
50 տ. Սաֆարեան Նատալիա
տ. Սարուխանեան Յուստինէ
տ. Վարդանեան Անանա
տ. Վարդանեան Նունէ
տ. Տէր-Առաքելեան Եւգինէ
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Օգանէսեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սաթենիկ
59 տ. Քամոյեան Եղիսաբէթ

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա.

տ. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբովեան Նոյեմզար
տ. Աբովեան Նատալիա

տ. Աւետեան Նազարէթեան Մարիամ (նոր անդ.)
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Աւետեան Նունէ
տ. Անանեան Վարվառէ
տ. Ամբարդանեան Թամար
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Աղայեան Նատալիա
տ. Անանեան Մարիամ
օր. Աղանեան Նուարդ
իշ. Արղութեան - Երկայնաբազուկ Սոֆիա
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Առստամեան Հեղինէ
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Աստուածատրեան Հեղինէ
տ. Աղամալեան Վիկտորիա

Բ.

իշ. Բէհբութեան Նադեժդա
օր. Բայսողոլեան Շուշանիկ
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բաբանասեան Թամար
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բարխուդարեան Սաթենիկ
իշ. Բէկթաբէկեան Անանա
տ. Բոզարջեան Մարիամ
տ. Բոզարջեանց Վարվառէ

Գ.

տ. Գարսոյեան Սոֆիա
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ
օր. Գոզալեան Օլգա
տ. Գուլազեան Վարվառէ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գասպարեան Սարրա

Դ.

օր. Դաւթեան Քալի

Ե.

տ. Երամեան Հռիփսիմէ
տ. Երէցփոխեան Սոֆիա

Զ.

տ. Զարգարեան Ժոզիֆինա (նոր անդամ)

Է.

տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ Յովսէփեան (նոր անդամ)
տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
տ. Էնֆիաճեան Աննա
օր. Էնֆիաճեան Վարսենիկ (նոր անդամ)

Թ.

տ. Թադէոսեան Վարվառէ
տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ

Ի.

տ. Իստամանեան Լիդիա (նոր անդամ)
տ. Իւզբաշեան Սոֆիա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իւզբաշեան Նատալիա

Լ.

տ. Լազարեան Մարիամ (նոր անդ.)
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ

տ. Լիսիցեան Հեղինէ
տ. Լիանոզեան Մարիամ

Խ.

տ. Խիզանեան Լիւբով (նոր անդ.)
տ. Խաչատրեան Եղիսաբէթ
տ. Խաչատրեան Նունէ
տ. Խարազեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խուդազեան Մարիամ
տ. Խունունց Գայիանէ
տ. Խրիմեան Կատարինէ (նոր անդամ)

Կ.

տ. Կաֆեան Նունէ
տ. Կուզանեան Աննա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կուկուջանեան Աննա
տ. Կրիտեան Ովսաննա

Հ.

տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Աննա
օր. Հախվերդեան Մաննա
տ. Հայրումեան Սաթենիկ
տ. Հեջուբեան Եղիսաբէթ

Ջ.

տ. Ջամոյեան Եւգինէ
տ. Ջիթողցեան Շուշանիկ

Ղ.

տ. Ղուլեան Վարվառէ
տ. Ղուլեան Աննա
օր. Ղուլիջանեան Կատարինէ
օր. Ղազարեան Կլաւդիա
տ. Ղալամքարեան Թամար
տ. Ղազազեան Սոֆիա
տ. Ղուլիջանեան Մարիամ
տ. Ղորղանեան Աննա
տ. Ղլտճեան Սաթենիկ

Մ.

տ. Մանուէլեան Եւա
տ. Մայիլեան Տատիանա
տ. Մելիք-Բէգլարեան Անահիտ (նոր անդամ)
տ. Մնացականեան Փառանձեմ
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
օր. Մելիք-Ազարեան Սոֆիա
տ. Մելիք Ղարագիոզեան Մարիամ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մուրադեան Հռիփսիմէ
տ. Մութաֆեան Լիւսի
տ. Մինասեան Սոֆիա (նոր անդ.)
տ. Միրաքեան Նունէ

Յ.

տ. Յակոբեան Սոֆիա
տ. Յակոբեան Նունէ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Յովհաննիսեան Շուշանիկ (նոր անդամ)

Ն.

տ. Նազարբէգեան Կատարինէ

Շ.

տ. Շահմուրադեան Ոսկի (Ն. ա.)

ԱՐՄ.
Ч-110ձ

տ. Շահնազարեան Նատալիա
տ. Շարբաբչեան Նունէ
տ. Շադինեան Վարվառէ
տ. Շահ.Պարոնեան Ռոզալիա
տ. Շխեանց Մարիամ

Ո.

տ. Ումիկեան Անն
տ. Ունուտցեան Կատարինէ

Ռ.

տ. Ռոտինեան Նատալիա

Ս.

օր. Սալամբէգեան Նունէ
տ. Սունդուկեան Սոֆիա
տ. Սարեան Սոֆիա

Վ.

տ. Վարդանեան Նատալիա (նոր անդամ)
տ. Վարդապետեան Նադեժդա
տ. Վահրամեան Եւգենիա

Տ.

տ. Տէր-Միքայէլեան Եղիսաբէթ (նոր անդամ)
տ. Տէր-Աւետիսեան Նունէ
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Նիկողայոսեան Նատալիա
օր. Տէր-Մկրտչեան Եւա
տ. Տէր-Դաւթեան Թեկլէ
տ. Տէր-Օհաննէսեան Նատալիա
տ. Տէրտէրեան Սաթենիկ
տ. Տիգրանեան Նատալիա
տ. Տիգրանեան Նադեժդա (ն. ա.)

Ց.

տ. Ցուրինեան Ալէքսանդրա
տ. Ցուրինեան Մարգարիտ

Փ.

տ. Փոնդոյեան Ելենա (նոր անդ.)
տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիդոնեան Մարիամ

Քաջ

տ. Քալանթար Սոֆիա
տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քամոյեան Մարիամ
տ. Քալանթարեան Անն.
տ. Քիշմիշեան Թամար
տ. Քալանթարեան Մարիամ
տ. Քալանթարեան Շուշանիկ (նոր անդամ)
տ. Քալանթարեան Թամար (նոր անդամ)

Օ.

տ. Օհաննէսեան Մարիամ
տ. Օհաննէսեան Մարիամ Գէորգեան
օր. Օրբէլի Վարդուհի (146)

ՕՐԱԿԱՐԳ

1. 1909 թուի ապրիլի 23-ին և մայիսի 11-ին կայացած ընդհանուր ժողովների արձանագրութեանց ընթերցումը։
2. Վարչութեան 1909 թուի գործունէութիւնը։
3. Ընկերութեան 1909 թուի եկամտից հաշիւը։
4. Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։
5. Կարուձևի՝ արհեստանոցի կառավարչուհու զեկուցումը։
6. Նախահաշուի ընթերցումը և վաւերացումը։
7. Վարչութիւնից հերթով դուրս եկող 3 անդամի, 4 փոխանդամի, վերաստուգիչ յանձնաժողովի և փոխանդամների ընտրութիւնը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Մաշտոցի անվան ձեռագրերի ինստիտուտ

2015
<< Ազգային գրադարան >>
NL0049356

Арм
4-110а